

ՀԱՅ-ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ

Համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանի ս/թ. սեպտեմբեր ամսի վերջերին Մայր Աթոռ ս. Էջմիածին այցելությունը առիթ ընծայեց մեզ կրկին անգամ բացել հայ-անգլիկան եկեղեցիների պատմության էջերը և թղթատել այն:

Հարյուր տարիներ երկարող այդ տարեգրության առաջին հիսուն տարիները մեր պատմության տխուր դեպքերն են հիշեցնում մեզ:

Օսմանյան Կայսրության լծի տակ ապրող մեր եկեղեցու հոգևոր առաջնորդները, Արևմտյան Հայաստանի հայկական գավառներում բարելավելու համար իրենց ժողովրդի քաղաքական և տնտեսական վիճակը, հույսեր էին կապում եվրոպական պետությունների միջամտությանը՝ այդ թվում և՝ Անգլիայի:

Ահա թե ինչու ժամանակի հայոց հոգևոր առաջնորդները, Կ. Պոլսի հայոց Ներսես պատրիարք Վարժապետյանը, Սսի Աթոռի բարձրաստիճան հոգևորականները և ապա Ամենայն Հայոց կաթողիկոսները և մանավանդ Մկրտիչ Ա Խրիմյանը բարի ակնկալություններով հարաբերություններ են մշակել Քենթրբերիի արքեպիսկոպոսների և անգլիական կառավարության հետ:

Այդ իմաստով կարևոր ենք համարում «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը հանձնել մի շարք նամակներ, որոնք պահվում են Լամբեթ պալատի արխիվներում:

Ա. Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՆԵՐՍԵՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Առաջին նամակը գրվել է Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի կողմից 1877 թ. հոկտեմբերի 29-ին՝ ուղղված Քենթրբերիի Քեմիրլ արքեպիսկոպոսին:

Ահա այդ նամակը.

«Ամենապատիւ Տէր եղբայր ի Քրիստոս Յիսուս ի Տէր և ի յոյսն Ձեր և մեր.

Բերկրութիւն ի սրտի ներկայիս գամ շնորհաւորել զՁերդ Բարձրութիւնն, վասն մարդասիրական և վեհ զգացմանց որով Լօնտրայի մէջ մօտերս ի նպաստ վիրաւորելոց հաստատեալ ընկերութեան նախագահելով ջանադիր կ՚ըլլաք շատ մը դժբախտ արարածներ ազատել ի սոսկալի հարուածոց այժմեան պատերազմին զոր Անգլիա, իւր շահիցը հակառակ, չկրցաւ դըժբախտաբար խափանել:



Տ. Ներսես պատրիարք Վարժապետյանի՝ Քենթրբերիի արքեպիսկոպոսին գրած նամակից մի էջ

Երբ հազարաւոր վիրաւորեալք և հալածեալք, երբ ընդհանուր Տաճկաստան Ձեր անունը կ՚արտասանեն օրհնութիւն ի բերան և երախտագիտութիւն ի սիրտս, ներեցէք ինձ ըսել թէ սոյն մարդասիրական վեհ գործը, ո՛ր ասոյնական զմայլման յարգանաց զգացմունքներ պատճառեց ի մէջ իմոյ փարախի ընդհանրապէս, և ի սիրտ նորա Հովուի մասնաւորապէս, յաղագս պատուական անձիդ և վասն որդւոց Մեծն Ալպիոնի, զորոնք կը սիրենք ու կը յարգենք իբրև սիրելի եղբարս ի Քրիստոս Յիսուս, Աւետարանական սրբով:

Ներեցէք ինձ յայտնել, որ սոյն զգացմունքները նոր չեն, բնական են և անկորուստ, վասն զի անգլիական բարոյական պարզ սկզբունքը, ինչպէս և նոցա արհեստական յատկութիւնները, հայոց բնաւորութեան զգալի կերպով կը համապատասխանեն:

Տեղւոյն մեծ հեռաւորութեան ու սոյն երկու ազգաց մէջ յարաբերութեանց պատճառներն են միայն, որ սիրելի ազգիս բարքն ու բարոյական և մտաւորական յատկութիւնները անծանօթ մնացած են անգլիացւոց, բաց ի բանի մը բացառութիւններէ:

Բարեբախտ կը համարեմ զիս որքան որ սոյն պատեհութեամբ Ազգիս առ Անգլիա ունեցած զգացմանցը թարգման կ՚ըլլամ, միանգամայն մասնաւոր կերպով Ձերդ Բարձրութեան ծանօթութիւն կուտամ այնպիսի ազգային խորհրդոց մը վրայով, որ նորա սոյն զգացմանց ակներև մէկ ապացոյցը կը համարուի:

Սոյն խորհուրդը անգլիական լեզուն և դաստիարակութեան եղանակը մեր դպրոցաց մէջ և մեծ մասամբ այժմեան աւերիչ պատերազմին դաշտը եղող Հայաստանի մէջ հանրացնել է: Այսու դիտաւորութեամբ կը փափաքինք Անգլիայէն թիւ մը դասատու բերել հոս, նմանապէս հայ աշակերտներ դրկել հոն ի կրթութիւն, երբ պատրիարքարանի նիւթական վիճակը բարւոքելով ներէ մեզ, ապագային մէջ սոյն օգտակար խորհուրդը ի գլուխ հանել:

Յայտնի է Ձերդ Բարձրութեան, որ Թուրքիոյ հպատակ բազմակրոն ազգաց մէջ Հայոց ազգը եվրոպական քաղաքակրթութիւն և առաջադիմութիւն ունեցած բնածին ընդունակութեամբը անկողմնակալ դիտողաց լուրջ ուշադրութիւնը գրաւած է, թէ սոյն ազգը, որ բառասուն դարու հնութեան դրոշմը կը կրէ, հրաշիւք իմն զԱսիա տակնուվրայ ընող քաղաքական ու ընկերային բախումներէն ազատելով, կարող եղաւ իր ազատութիւնը, կրօնքը ու լեզուն պահել և առանց գաղտնի խորհուրդ մը իր մէջ սնուցանելու դեռ կը պահէ զանոնք Մեծն Բրիտանիոյ հետ աւանդական բարեկամութեամբ կապուած Օսմանեան իշխանութեան ներքև:

Մինչդեռ այսօր ամէն ազգաց ջանքը իրենց բարոյական ու նիւթական վիճակին բարւոքմանը կը դիմէ ուսման ու կրթութեան թեւակոխելով, որոնք յառաջադիմութեան երկու շարժառիթն են, Հայոց ազգը լաւ համոզելով, որ Արևելքի վերակենդանութեան վերապահեալ տարր մ՚է, չի կրնար անտարբեր կենալ սոյն շարժման, որուն առջևէն կը բալէ, իբր սիւն լուսեղէն ազատասերն ու քաղաքակիրթն Անգլիս: Բնականաբար իր ազգային դաստիարակութիւնը բարձրացնելու և զանի այս տեսակ ապագայի մը պատրաստելու միջոցներ կը փնտռէ:

Կը հայցեմ յերկնից որ իր Սուրբ պաշտպանութեան տակ առնէ սոյն մեծ ու վեհ Ազգը, որուն եկեղեցին խիստ արժանաւորութեամբ կը ներկայացնէ Ձերդ Բարձրութիւնը և համոզեալ ըլլալով որ վերոյիշեալ խորհուրդը ամէն կողմանէ բաջալերութիւն պիտի գտնէ ու Ձերդ Բարձրութեան կողմէն ալ

պիտի արժանանայ միևնոյն համակրութեանց, որով կը սիրէք զբարին ու զճշմարիտն»:

Քեմպլը արքեպիսկոպոսը, որը ծանոթ էր մեր եկեղեցու և ազգի պատմությանը, 1877 թ. դեկտեմբերի 11-ին իր մի գրությամբ պատասխանում է Ներսես պատրիարք Վարժապետյանի վերոհիշյալ նամակին.

«Մենք Անգլիական եկեղեցու և հավատացյալ ժողովրդի հետ միասին, խորապես հետաքրքրված ենք Արևելյան մայրցամաքի բնակիչների բարեկեցությամբ, որոնք երկար դարեր ոչ պետական պայմանների մեջ և նույնիսկ ճնշման ու հալածանքի ներքո, ամուր կանգնած են մնացել Հիսուս Քրիստոսին՝ հույսով, և առաքյալների քարոզության հավատքով: Ուստի, Ձերդ Սրբությունը թող իմանա, որ Ձեր այս ծրագիրը արժանացավ մեր խիստ լուրջ քննարկմանը:

Հայտնում ենք մեր հավանությունը և խնդրում Աստծուն, որ բազմապատկի Ձեր ճիգերը՝ Ձեր ժողովրդի կյանքի պայմանները բարելավելու համար: Թող աստվածային նախախնամությունը հովանավորի այդ ճիգերը, ինչպիսին են Ձերդ Սրբության կողմից առաջադրվածները, որոնք ներկայումս ձեռնարկվում են Արևելքի հին հայկական համայնքների օգտին»:

Նամակը վերջանում է հետևյալ արտահայտությամբ՝ «Միակ օգնությունը, որ հայերը կարող են ակնկալել, պիտի լինի քրիստոնեական կարեկցանքը և ազնիվ քաջալերանքը, երկուսն էլ անզոր՝ խոսքերի սահմանում»:

Վերոհիշյալ նամակների փոխանակումից հետո Ներսես պատրիարք Վարժապետյանը հիմնում է մի քանի կրթական հաստատություններ: Այդ ջանքերի շնորհիվ Պոլսում ծնունդ առան երկու ընկերություններ՝ «Հայ միացյալ ընկերություն» և «Հայ ազգանվեր հայուհեաց» ընկերություն: Առաջինի նպատակն էր անվճար ուսուցմամբ կրթական գործը ընդլայնել Հայաստանի գավառներում և Կիլիկիայում՝ առանց սեռի խտրության: Երկրորդը՝ «Հայ ազգանվեր հայուհեաց» ընկերությունը ստեղծվեց 1879 թվի ապրիլին Կ. Պոլսում, և որի նպատակն էր աղջիկներին հայեցի և քրիստոնեական դաստիարակություն ջամբել:

Ըստ Լամբեթ պալատի փաստաթղթերի 1881 թվին Լոնդոնում մի կոմիտե էր կազմվել՝ «Հայկական կրթական ընկերություն» անվամբ: Այս կոմիտեն ցանկանում էր Քենթրբերիի արքեպիսկոպոսի հովանավորությունն ու ներկայությունը իր առաջին ժողովին, որը ծրագրված էր գումարել Լամբեթ պալատի մեջ:

Ասլան դ'Ապե անունով մի հայորդի, հունիս 7, 1881 թ. իր նամակում բացատրում էր այդ կրթական կոմիտեի դերը հայկական գավառների կրթական կարիքների ապահովման խնդրում: Սույն ծրագիրը արժանացավ մի շարք ազդեցիկ անգլիացիների ուշադրությանը, որոնք համաձայնվեցին ընդգրկվել կոմիտեի կազմում: Ասլան դ'Ապեն խնդրում էր վերոհիշյալ նամակում, որ արքեպիսկոպոսը հովանավորի այդ ժողովը: Նամակը ավարտվում է կոմիտեի անդամների ցուցակով: Ոչ մի պաշտոնական գոյություն չունի արքեպիսկոպոսի հետագա դիրքի մասին: Բայց ժողովը տեղի է ունենում 1881 թվի դեկտեմբերի 14-ին **Երուսաղեմի սրահում Ռեթսմինիստր Աբբեյում:**

Ժողովին ներկա են լինում անգլիական եկեղեցու և ժողովրդի ներկայա-

ցուցիչները: Ըստ ժողովի արձանագրության՝ մատնանշվում է Թուրքիայում հայ ժողովրդի կատարած հիգերը կրթական գործի հանկողության համար:

Սույն ընկերությունը կազմվում էր Ռեստուինիստ Աբբեյի ավագերեց Սթենլիի նախագահությամբ և մեծ հուսեր էր ներշնչում, որ այն լայն արձագանք կգտնի անգլիական շրջանակներում և կապահովի անգլիացի ժողովրդի նյութական և բարոյական օժանդակությունը:

Բ. ՖՈՆՈՒԶԻ ՆԻԿՈՂՈՍ ԵՎ ԶԵՅԹՈՒՆԻ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

1893 թվականի օգոստոսի 25-ին, Հալեպի կենտրոնական բանտից, որ արգելափակված էին թրքական իշխանությունների կողմից Ֆոնուզի Նիկողոս և Զեյթունի Կարապետ արքեպիսկոպոսները, Ղևոնդ բահանա Մենանյանն ու ծանոթ հասարակական գործիչ և գրող Սարատ Բյուրատը նամակ են գրում Քենթրբերիի արքեպիսկոպոսին՝ խնդրելով նրա բարեխոսությունն ու միջնորդությունը «այս մահացուցիչ զնդանեն (Հալեպի բանտից), որ նետված ենք երեք տարիներե հետե, և որ պիտի հյուծիմք և մեռանիմք եթե շարունակե Բարձրագույն Դուռը (Թյուրք կառավարությունը) խաբե զԵվրոպա, և եթե Մեծն Բրիտանիա չփութացնե յուր հզոր ներգործությունն, որ բարերար և կենդանարար փրկություն պիտի շնորհե բոլոր զրկյալ բրիստոնեից»:

Սույն նամակը ևս, որպես պատմական կարևոր փաստաթուղթ, հրատարակում ենք այստեղ:

«Բարձրաշնորհ Սրբազան Հա՛յր.

Թայմզի 5110 թիւ և 5 յունիս 93 թուակիր «Հայ բանտարկելոց ազատութիւնը» տիտղոսով մէկ յոդուածին պարունակութեան ծանօթանալով՝ կ՚համարձակիմք խնդրել Ձերդ Բարձրաշնորհ Սրբազնութեան բարեհաճութիւնն և թոյլատուութիւնն, որպէսզի մատուցանենք ներկայս, նկարագրելով մեր եռամեայ տաժանակիր բանտարկութեան մէջ կրածները, հայցելով նաև Ձերդ Բարձրաշնորհ Սրբազնութեան հզօր պաշտպանութիւնը, զոր արդէն կ՚վայելեմք և որոյ համար պարտաւորեալ եմք յոտս՝ Սրբազնութեանդ դնելու մեր ամենախորին երախտագիտութեան զգացմանց հաւատիքը:

Ի վաղուց անտի կ՚փափագէինք առիթ մը գտնել ներկայելու մեր խնդիրն առաջի առաքելաշնորհ և մարդասէր Սրբազնութեանդ, որ անտարակոյս կ՚արգահատի մեր և մեր զաւակաց ու ժողովրդեան կրած անիրաւ զրկանաց վերա: Այս առիթն եկած հասած կ՚համարիմք, ուստի և անկրկնիս. յուսով և հաստատ հաւատով կ՚փորձեմք հատուցանել մէջ բերել Զէյթունի վերջին յեղափոխութեանց դէպքերը:

Կիլիկիոյ կեդրոնը կանգնած այս բրիստոնեայ Սե-լեռը, 27 տարիներէ հետէ կորուսած է իր դարաւոր անկախութիւնը: Այդ աղետաբեր կորստեան վերա թուրք բարբարոսութիւնը ոտք կ՚դնէ մեր հողին վրա, և կ՚ճարտարեցնէ ու կ՚բռնաբարէ մինչև ցարդ մեր ազգային ու կրօնական ամենասուրբ և արդար իրաւունքները, հակառակ Պերլինի 61 և 62 յոդուածոց իմաստին, որոց գործադրութիւնը պաշտօնապէս խոստացած և ստանձնած է Օսմանեան պետութեան Բարձրագոյն Դուռը: Եւ որովհետև Բարձրաշնորհ

Սրբազնութեանդ բազմազբաղ ու սուղ ժամերը չեն ներեր այս բրոնաբարմանց ամբողջ սլատմութիւնը լսելու, զանց կ'ընեմք յիշատակել 1878, 1879, 1884 և 1886 տարիներուն արիւնահեղ անցքերը և 1876, 1884 և 1889 տարիներուն համայնաւեր հրդեհները, զորս Բ. Դրան հակաքրիստոնեայ դիւանագիտութեան մոլեգնութիւնն առաջ բերած է, Զեյթունի հայութիւնը բնաջինջ ընելու դժոխային միակ նպատակաւ։ Զանց կ'ը-



Ֆոնուզի տ. Նիկողոս և Զեյթունի տ. Կարապետ արքեպիսկոպոսների՝ Քենթրբերիի արքեպիսկոպոսին Հալեպի կենտրոնական բանտից գրած նամակից մի էջ

նեմք մանաւանդ մանրամասնութիւնքն 1862-ի մեծ պատերազմին, յորում Բ. Դրան կողմէն մեր լերին վերայ յարուցեալ 44000 հրոսակներէն 7000 անձինք կոտորեցան հայ լեռնականաց ինքնապաշտպան բազուկներովը: Պիտի յիշեմք միայն 1890-ի յեղափոխութիւնն և մեր բանտարկութեան պարագայքը:

Ամէն **Գայմագամ որ** նպատակ ունի **միւթասարրըֆութեամբ** բարձրանալու Կ. Պոլսոյ մէջ, նախարարութենէն շատ սուղ կ'գնէ Զէյթունի Գայմագամութիւնը, նոյնպէս, ամէն միւթասարրըֆ որ կ'փափագի Վալիութեան բարձրանալու, բոլոր ինչքն ու դրամը կ'ծախսէ գնելու համար Մարաշի միւթասարրըֆութիւնը: Այսպէս. **Սալիհ բաշա,** կառավարիչ Մարաշու, ի Մարաշ հասած չ'հասած կ'աշխատի ձեռք ձգել Զէյթունի աւազակները. կ'երթայ ի Զէյթուն տասանորդի տրոց վաճառման նախագահելու պատրուակաւ և թշուառ ժողովուրդը կեղեքելու նպատակաւ: Հեծելազօրաց գնդեր կ'ցրուէ մեր լերին շրջակայ գիւղօրէից վերայ, կ'ասպատակէ, կ'յափշտակէ, կ'հարստահարէ: Քաղաքացիք յուսահատած՝ 6 մարդիկ կ'բերեն կ'հանձնեն բաշային, որ կ'ներէ նոցա, կ'բաշխէ գումարներ ի նուէր: Քանի մ'օրէն կ'մեկնի ի Մարաշ: Քանի մը շաբաթ վերջ մայրաքաղաքի բոլոր թերթերը գովեստով կ'հրատարակեն Սալիմ բաշայի գործունէութիւնն և մատուցած ծառայութիւնները: Ամիս մը վերջ, այդ ներեալ և նուիրատու վեց մարդիկ կ'սպանեն **Օսման** ժանդարմայ մը, որ իւր երկու ընկերաց հետ Սալիհ բաշայի կողմէն ամսաթոշակով ղրկուած էր լրտեսութեան, ի Հանն, 5000 հայ բնտանիքներ պարունակող Զէյթունի դրացի քաղաքը և վերադարձած էր ի Զէյթուն: Այս պարզ մարդասպանութեան՝ կ'տրուի երանգ ապստամբութեան. Սալիհ բաշայի և նորա վարպետ Հալէպի նախորդ կուսակալ Արիֆ բաշայի բարձրամոլ և կաշառակեր քաղաքականութեան շնորհիւ: Ուստի, Մարաշէ անգամ մ'ևս կ'այցելէ Սալիհ բաշա զԶէյթուն, ուր եկած օրը, առանց մեկ ժամ կորուսանելու, կ'սկսի Զօրանոցէն գնտակոծ ընել տալ Զէյթունի բոլոր եկեղեցիները, վարժարաններն ու բնակարանները...

Զէյթունցիք իրենք գիրենք պաշտպանելու համար կ'դիմադրեն զօրաց հարձակումներուն և ամօթալի պարտութեամբ մը կ'խայտառակեն փախստական զօրաց գնդերը: Կռիւը կ'տևէ կէս օրէն մինչ գիշեր: Կռուողները կ'փախչին լեռները. բաշան կ'կատղի. շրջագայելէն Բ. Դրան հրամանաւ բանի մը վաշտեր ևս կ'հանձնէ յօգնութիւն, այլ ի զո՞ւր. փախստականք չեն հանձնուիր: Սալիհ բաշա զայրացած, ջորեռ ու ձիաւոր զօրքերը կ'տեղաւորէ մեր վանուց մէջ, անտի բռնի արտաքսելով զմեզ և միաբանութիւնը. կ'գրաւէ ս. մենաստանաց անօթները, գոյքերը. կ'պղծէ վայրաց Սրբութիւնը...: Աւելին կ'ընէ, թունաւոր պատուաստի կ'մատուցնէ **554** մատաղ արու մանկիկներ. յարար և յաւեր ասպատակ զօրաց կ'մատնէ Զէյթունի եօթն հայ գիւղօրէքը. բոլոր եկեղեցիները, վարժարանները կ'դատարկացնէ. մանկտին կ'արտաքսէ, հոն կ'զետեղէ վայրենի զօրաց վաշտերն, որք կ'ապականեն ու կ'բանդեն այդ նուիրական տեղիքը: Զարհուրելի՜ տեսարան. մեր գերեզմանոցին վերա գնտակներ արձակել կուտայ, կրոնին ժամանակ, ի տան, **մարտինի** գնտակով մ'սպանեալ մանկամարդուհի հարսի մը թաղման արարողութեան մէջ և ի լրումն բարբարոսութեան կ'ձերբակալէ զմեզ, յանիրաւի կ'բանտարկէ երեք տարիներէ հետէ կ'չարչարէ, կ'անարգէ...: Հալէպի վերաբնին դատարանը կ'դատապարտէ զմեզ ի մահ, ցմահ բերդարգելութեան, ևն, ևն: Մեր դատապարտութեան **իլամը**՝ 14 ամիս առաջ կ'ղրկուի Կ. Պոլսոյ Վճռաբեկ Ատենին, որ իբր թէ՝ վավերացուցած է եղեր մեր վճիռները: Լա՛ւ. ե՞րբ պիտի գործադրէ. մինչև ե՞րբ պիտի չարչարանաց ենթարկէ զմեզ. թո՛ղ իւր սահ-

մանած պատիժները գործադրէ դատարանը. գոնէ մեր մէջէն քահանայն, միանգամ ընդ միշտ կ'ազատի այս կեանքէն, որ դառնագոյն է քան զմահ. կեանք մը, զուրկ ի սփոփանաց...: Մնացեալքս գոնէ կ'աքսորուիմք այլուր և կ'ազատիմք բանտէ՞ն:—

Այս ամէն զրկանաց արժանի՞ եմք. զի **հայ լուսաւորչական** լինելու և մեր հայրապետաց կանոնաց ու նախահարց աւանդութեանց հաւատարիմ մնալու ոճի՞րը գործած եմք. զի, դժբաղդաբար, բողոքական լինելու բարեբաղդութիւնը չ'ունենալով՝ չ'ունինք **Աստուածաշնչոյ Ընկերութեանց** պէս հզօր պաշտպաններ, որք ամէն արդարացի ճնշումներ ի գործ դնեն և անյապաղ արձակեն զմեզ ևս, ինչպէս որ արձակել տուած են **զԹումայեան** և **զԳայեան** պատուելիները՞ը: Ավա՜ղ, ուրեմն մեզ նման անտէրունչ և անօգնական. հարստահարեալ հօտին. ավա՜ղ, ուրեմն մեզ նման ս. Ավետարանի, Բանին Կենաց սպասաւորաց, որք չեմք համարուիր քրիստոնէութեան ընտանեաց անդամներէ՞ն...: Այո՛, այո՛, իրաւունք ունինք արտասուելու մեր աղիողորմ կացութի՞ւնը: Տարի մ'անցաւ, յորմէ հետէ դիմումն ըրած ենք առ Նորին Բարձրութիւնն Մեծ-Նախարարապետ պրն. Կլատսթոն, խնդրելով Մեծին Բրիտանիոյ հզօր ազդեցութիւնն ի մասին փութով արձակման բանտարկելոցս և բարենորոգման մեր Զէյթունի հարստահարեալ վիճակին: Քանի՞ մեծ եղած է բոլորիս յոյսն և ուրախութիւնն, երբ Մեծանուն Մարդը բարեհաճած էր խոնարհելու մեզ պատասխանագիրներ ղրկելու կրկին, որովք աւետած է թէ՝ մեր խնդիրը յանձնուած է Կ. Պոլսոյ Մեծին Բրիտանիոյ դեսպանութեան և թէ՝ Բ. Դուռը խոստացած է անյապաղ ի գործ դնել արդարութիւնը. կայսերական ներումն շնորհելով կամ քննիչ յանձնախումբ մը ղրկելով ի Զէյթուն...: Եւ ո՛չ մին ըրաւ. Բ. Դրան միակ դիտաւորութիւնն է տանջել զմեզ: Այն փախստականք, թուով քսան, որք մեզ հետ նոյն դատապարտութեան ենթարկուած են նոյն **իլամով**, ոմանք ի մահ և այլք ի մշտնջեան շղթայակիր բանտարկութեան դատապարտեալ, այս օրերս ամենքն ալ արժանացան կայսերական ներման և, բացառի՞կ շնորհ, տեղական կառավարութիւն իրենց յանձնած է Զէյթունի տասանորդի տրոց գանձման պաշտօնները: Ո՞րքան անբարոյականութիւն. ո՞րպիսի դաւ գայթակղութեան, ո՞րպիսի ապացոյց կառավարական ապիկարութեան, որ **գթութիւն** կ'կոչուի...: 29 անմեղ բանտարկեալքս տակաւին տառապի՛մք, իսկ փախստականք ներուի՛ն:

Այս պահուս, Բարձրաշնորհ Սրբազան Հա՛յր, մեր Սրբազան Կաթողիկոսն Կիլիկիոյ, իւր բոլոր եպիսկոպոսներէն ու վարդապետներէն զուրկ մնացած, իւր կենաց երեկոյին մէջ կ'սպասէ բարերար մահուան գալստեան, չ'լսելու համար իւր ժողովրդեան լացն ու կոծը. չորացած, տերևազուրկ ծառ մ'է նա. Բ. Դրան սուտ խոստումներէն իսպառ յուսահատած, արտասուել միայն գիտէ և կ'արտասուէ: Կ. Պոլսոյ մեր պատրիարքը պարտաւորեալ է մեն մի քայլին համարը տալու Բ. Դրան, և չի համարձակիր մեզ ինկատմամբ Ապտուլ Համիտ փատիշահին գթութեան և ներման շնորհը խնդրելու: Մեր վանորայք փակուած են և կամ հրադաղ եղած հարկահաւաք զինուորաց. մեր եկեղեցիք թափուր են ի հաւատացեալ յաճախողաց, նման աւերակաց խորը խարխուլ ընկած անմոռունչ տաճարաց...

Ճանապարհք կապուած են, գիւղացիք, քաղաքացիք անհաղորդ մնացած են. մերկ ու նօթի ժողովուրդը չէ կարող դուրս ելնել իր խրճիթէն. հարկահաւաք զինուորաց չ'հանդիպելու համար. ի մի բան, ամենուրեք սարսափը կ'տիրէ: Առ Մեծն Բրիտանիա մեր ըրած դիմումներուն և Մեծին Բրիտանիոյ՝ Բ. Դրան վերայ ի գործ դրած ճնշումներուն հետևանքն եղած է հրա-

հանգիստ դրկել բոլոր կուսակալութեանց, որպէս զի հայ բանտարկեալոցս չարչարանքն առելի ևս յառաջ տարուին և ոչ բանտարկեալոց տուրքերը կրկնապատկուին: Նահատակեալ բանտարկեալ մը օրերով կ'մնայ անթաղ, մինչև որ յանդուգն քահանայ մը նետուի ի դուռն բանտին և հանէ թաղել տայ պանդուխտ բանտարկեալը: Զմեզ խորհողք կամ հոգալու ոճիրը գործողք՝ անմիջապէս կ'բանտարկուին: Տասնեւութ դարերէ հետէ միլիոնաւոր նահատակաց արեամբ գնուած և հաստատուած Հայոցս Ս. Եկեղեցին, այսօր կ'հեծէ ընդ լծով բռնութեան: Բռնապետին մագիլները միանգամ մինչև մեր սրբավայրից խորը, սրբազան մատենից, աղօթից և մինչև իսկ Ս. Աւետարանի մէջէն համարներ բառնալու յանդգնեցա՞ն:

Հետևապէս, Բարձրաշնորհ Սրբազան Հայր, այս ամենասոսկալի տառապանաց և հարստահարութեանց վախճան դնելու համար առ ո՞վ պիտի կարենամք դիմել, եթէ ոչ առ Պաշտպանդ Քրիստոնէութեան, առ առաքելաշնորհ Սրբազան արքեպիսկոպոսդ Մեծին Բրիտանիոյ Միացեալ Թագաւորութեան: Ուստի, անխաբ յուսով և հաւատով կ'փութամք դիմել և հեղուլ յոտս Մարդասէր Պաշտպանիդ Քրիստոնէութեան, մեր արտասուախառն պաղատանքն և աղաչանքն, որպէսզի բարեհաճիք ի գործ դնել Մեծի իշխանութեանդ սեպհական և յատուկ միջոցներն, որովք մեք, հարազատ ապաստարք սուրբ Աւետարանին և հաւատարիմք մեր նախնեաց աւանդած նուիրական սուրբ օրինաց, ժամ առաջ արձակուիմք այս մահացուցիչ զնդանէն ուր նետուած ենք երեք տարիներէ հետէ, և ուր պիտի հիւծիմք և մեռանիմք, եթէ շարունակէ Բ. Դուռը խաբել զԵւրոպայ և եթէ Մեծն Բրիտանիա չփութացնէ իւր հզօր ներգործութիւնն, որ բարերար և կենդանարար փրկութիւն պիտի շնորհէ բոլոր զրկեալ քրիստոնէից:

Հաճեցէ՛ք, Բարձրաշնորհ Սրբազան Տէ՛ր, մեր խորին երախտագիտութեան և անկեղծ շնորհակալեաց հետ մեր սրտագին բարեմաղթութիւնքն վասն երջանկութեան կենաց Պաշտպանիդ Քրիստոնէից ընդունիլ:

Մնամք յաւէտ, Տէր Բարձրաշնորհ, ամենախոնարհ ծառայք Սրբազնութեանդ:

Ուսուցիչ	Ղևոնդ քհն.	Կարապետ	Նիկողոս
Մնբատ Բիւրատ	Շենանեան	Արքեպիսկոպ.	Արքեպիսկոպ.
		Զեյթունի	Ֆոնուզի

25/6 օգոստ. 93.
Կ. բանտ. Հայէպ

Առ Նորին Բարձրաշնորհ Սրբազնութիւն
Տ. Տ. Սրբազան արքեպիսկոպոս Քենթէրպրրիի
Քաղաքն Լօնտոն

Գ. ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՆԱՄԱԿԸ ՔԵՆԹԵՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Լամբեթի պալատում պահվում են նաև մի շարք նամակներ, որոնք փոխանակված են Մայր Աթոռի և Քենթրբերիի արքեպիսկոպոսարանի միջև 1884—1904 թվականներին:



Խրիմյան Հայրիկի համակը Քեռթրրերի արքեպիսկոպոսին

Նամակներից առաջինը մի պատասխան է գրված Մկրտիչ Արք.-ի կողմից և որը կրում է 1884 սեպտ. 21 թվակիրը: Նամակում խոսվում է այն մասին, որ Քենթրքերիի արքեպիսկոպոսը խորապես բաժանում է հայոց վիշտը Թուրքիայում հայության կրած դառն տառապանքների կապակցությամբ և խնդրում է տրվում շուտով ուղարկել մի հանձնախումբ հայ ժողովրդի ծանր կացությունը քննելու և նրան օգտակար լինելու մտադրությամբ:

Այժմ այստեղ հրատարակում ենք Մկրտիչ Ա Խրիմյան Հայրիկի մի այլ նամակը, որ կրում է 1904 թվականի սեպտ. 20-ի թվագրությունը՝ ուղղված Քենթրքերիի արքեպիսկոպոսին:

Նամակը հետաքրքիր է իր բովանդակությամբ և ստորագրված է «Տառապեալ ու վշտակիր Խրիմեան Հայրիկ կաթողիկոս»:

Ահա այդ նամակը.

«ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՁԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ

ԷՋՄԻԱԾՆԻ

Բարձրաշնորհ Տէր արքեպիսկոպոսին Քենտրպրրի, Պատուական Եղբօր Մերոյ ի Քրիստոս, ողջոյն եղբայրական սիրոյ և անկեղծ յարգանաց:

Սիրելիր ընդունելութիւն, զոր Բարձրապատիւ Եղբայրութիւն Ձեր ցուցեալ է պատգամաւորաց իմոց՝ երկոցունց արքեպիսկոպոսաց Տ. Յովսեփայ Սարաճեան և Տ. Սահակայ Այվատեան այդր ի Լոնդոն, և ցուցեալ համակրանք հանդերձ անկեղծ ցաւակցութեամբ հաւնդէպ տառապանաց նահատակ եկեղեցւոյ և հօտին իմոյ՝ որ ի Թուրքիա, ապաքէն լցուցին զսիրտ իմ անսուտ միխիթարութեամբ:

Վիշտ մեծ է, Տէր Եղբայր, և կսկիծ անմոռանալի ի տես թշուառութեան և սանվերջ տառապանաց միոյ հնագարեան Առաքելական անաղարտ Եկեղեցւոյ և հնագոյն Ժողովրդեան, որ արեամբ և կենօք եկաց մինչ ցարդ յԱրևելս, Եկեղեցին իւրով բազմաթիւ մարտիրոսօք և ժողովուրդն անսպառ հալածանօք, գերութեամբ և գաղթականութեամբ և այն միայն ևեթ հաստատուն յուսովն և հաւատովն, զոր ունին առ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս և Առաքելական Եկեղեցին Նորա:

Ես մեծայուս եմ, Բարձրապատիւ Եղբայր, զի Փրկիչն Յիսուս, որ հաստատեաց զեկեղեցին իւր պատուական արեամբ իւրով և խաչին սրբով և զօրացոյց զնա ընտրեալագոյն պաշտօնէիւք և սուսց՝ ինքն լինել ընդ հաւատացեալս իւր մինչև ի կատարած աշխարհի, նոյն ինքն պահեսցէ զեկեղեցին Հայաստանեայց, զանդրանիկն ի հաւատացեալս աշխարհիս և զժողովուրդն մեր ընդ խնամովք իւրովին, և եթէ տառապեցաւ նա բազում ժամանակաւ և տառապի այսօր, յուսամ զի ի մուտս քսաներորդ դարուս լուսաւորութեան, ազատութեան և համաշխարհային սիրոյ գտցէ կատարելապէս զիւրն անդորրութիւն և խաղաղութիւն և նահատակ ժողովուրդն զիւրն հանգիստ:

Անդրդուելի գոլով իմ ընդ սէր Ձեր և ընդ համակրանս, զոր ունիք առ եկեղեցին իմ և ժողովուրդն, ես յուսալ յուսամ, զի Բարձրապատիւ Եղբայրութիւն Ձեր ունի ըստ հնարաւորութեան օգնել պատուիրակաց իմոց և միջնորդել առաջի Նորին Մեծութեան թագաւորին Մեծին Բրիտանիոյ, վասն

թեթևացուցանելոյ զվիշտ և զտառապանս միոյ բազմաչարչար ժողովրդեան, որ ի սկզբանէ անտի ինքնագիտակցութեան իւրոյ յառեալ կայ զաչս իւր յԱրևմուտս յոստանն Անգլիոյ լի յուսով և հաւատով: Ընկալարուք, Բարձրաշնորհ Եղբայր ի Քս, զհաւաստիս խորին մեծարանացս և կատարեալն վըստահութիւնս, զոր տածեմ առ Բարձրապատուութիւն Ձեր, մնալով յուսով բարգաւաճման Հայաստան աշխարհի և խաղաղութեան եկեղեցւոյ նորին:

Ի 20 սեպտեմբերի 1904 ամի
և ըստ տոմարիս ՌՁԾԴ.
ի Հայրապետութեան մերում ԺԱ ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.
Թ. 891 տառապեալ և վշտակիր՝

Մկրտիչ կաթողիկոս Հայոց»:

Հետագայում կհրատարակենք նաև այլ փաստաթղթեր հայ և անգլիական եկեղեցիների հարաբերությունների մասին:

ԱՐՍԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ